

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«---» հոկտեմբերի 2016թ.

N-----Ն

### ՈՐՈՇՈՒՄ

#### ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2015 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 23-Ի N 435-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 16-րդ կետով և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2016 թվականի սեպտեմբերի 15-ի «Հայաստանի Հանրապետության 2016 թվականի պետական բյուջեում վերաբաշխում, Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի դեկտեմբերի 24-ի N 1555-Ն և Հայաստանի Հանրապետության կառավարության 2016 թվականի մայիսի 5-ի N 461-Ն որոշումներում փոփոխություններ ու լրացումներ կատարելու և գումար հատկացնելու մասին» N 948-Ն որոշումը՝

#### Երևան քաղաքի ավագանին որոշում է.

1. Երևան քաղաքի ավագանու 2015 թվականի դեկտեմբերի 23-ի «Երևան քաղաքի 2016 թվականի բյուջեի մասին» N 435-Ն որոշմամբ հաստատված.

- 1) եկամուտների գումարն ավելացնել 5,962.9 հազար դրամով,
- 2) ծախսերի գումարն ավելացնել 5,962.9 հազար դրամով:

2. Երևան քաղաքի ավագանու 2015 թվականի դեկտեմբերի 23-ի «Երևան քաղաքի 2016 թվականի բյուջեի մասին» N 435-Ն որոշմամբ հաստատված NN 1, 2, 3, 6 և 7 հավելվածներում կատարել փոփոխություններ՝ համաձայն սույն որոշման համապատասխանաբար NN 1-5 հավելվածների:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ

Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

**«ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2015 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 23-Ի N 435-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**

«Երևան քաղաքի ավագանու 2015 թվականի դեկտեմբերի 23-ի N 435-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման նախագծով (այսուհետ՝ նախագիծ) նախատեսվում է Երևան քաղաքի 2016 թվականի բյուջեում իրականացնել հետևյալ փոփոխությունները.

- Երևան քաղաքի ավագանու 2016 թվականի մարտի 18-ի N 486-Ա որոշմամբ հաստատված Երևանի քաղաքապետի 2016 թվականի փետրվարի 25-ի N 619-Ա որոշման համաձայն՝ ստեղծվել է «Երևանի Շենգավիթի նետաձգության մարզակումբ» համայնքային ոչ առևտրային կազմակերպությունը: Կազմակերպության 3 ամսվա գործունեության կազմակերպման համար նախատեսվում են բյուջետային հատկացումներ 1.957,1 հազ. դրամի չափով:

- ՀՀ կառավարության 2016 թվականի սեպտեմբերի 15-ի N 948-Ն որոշմամբ 5,962.9 դրամով ավելացվել են ՀՀ 2016 թվականի պետական բյուջեով Երևան քաղաքի ենթակայության կազմակերպություններում այլընտրանքային աշխատանքային ծառայողներին դրամական բավարարման հատկացումները, ինչը պայմանավորված է ամառային զորակոչի շրջանակում այլընտրանքային աշխատանքային ծառայողների քաղաքի ենթակայության կազմակերպություններ ուղարկելու, ինչպես նաև այլընտրանքային ծառայության հարցերով հանրապետական հանձնաժողովի 2016 թվականի մայիսի 3-ի որոշմամբ քաղաքի ենթակայության կազմակերպություններ այլընտրանքային աշխատանքային ծառայողների տեղափոխելու հանգամանքով: Նախագծով նախատեսվում է նշված գումարն արտացոլել Երևան քաղաքի 2016 թվականի բյուջեի եկամտային և ծախսային մասերում:

- Նախագծով նախատեսվում է Երևանի քաղաքապետի 2016 թվականի սեպտեմբերի 23-ի որոշմամբ ստեղծված «Երևանի Նորք-Մարաշի շախմատի մանկապատանեկան մարզադպրոց» և «Երևանի Քանաքեռ-Զեյթունի շախմատի մանկապատանեկան մարզադպրոց» համայնքային ոչ առևտրային կազմակերպություններին հատկացնել 1,200.0 հազարական դրամ՝ 2 ամսվա գործունեության կազմակերպումն ապահովելու նպատակով:

- Պայմանավորված այն հանգամանքով, որ «Իրինա Ռոդինայի գեղասահքի մարզադպրոց» ՀՈԱԿ-ի բացումը տեղի է ունեցել 2015 թվականի դեկտեմբերի 5-ին, իսկ Երևան քաղաքի 2016 թվականի բյուջեում ՀՈԱԿ-ի պահպանման ծախսերը կանխատեսվել են նախնական հաշվարկների հիման վրա, ինչպես նաև հիմք ընդունելով ընթացիկ տարում կատարված փաստացի ծախսերը՝ անհրաժեշտություն է առաջացել կատարել ճշտումներ ՀՈԱԿ-ին տրամադրվող սուբսիդիայում՝ այն ավելացնելով 25,000.0 հազ. դրամի չափով:

- Նախագծով նախատեսվում են նաև հոգվածային վերաբաշխումներ՝ փաստացի եկամուտներին համապատասխան Երևան քաղաքի 2016 թվականի բյուջեի վարչական և ֆոնդային մասերի հավասարակշռման նպատակով, ինչի արդյունքում նշված ծրագրերի գծով որևէ քանակական կամ բովանդակային փոփոխություն չի իրականացվում:

Ելնելով վերոգրյալից՝ առաջարկվում է Երևան քաղաքի ավագանու 2015 թվականի դեկտեմբերի 23-ի N 435-Ն որոշման մեջ կատարել համապատասխան փոփոխությունները:

## ՏԵՂԵԿԱՆՔ N 1

**«ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2015 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 23-Ի N 435-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԿԱՍ ԲԱՑԱԿԱՑՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ**

«Երևան քաղաքի ավագանու 2015 թվականի դեկտեմբերի 23-ի N 435-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման նախագծի ընդունման առնչությամբ այլ իրավական ակտերի ընդունման կամ փոփոխության անհրաժեշտություն չի առաջանում:

## ՏԵՂԵԿԱՆՔ N 2

**«ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2015 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 23-Ի N 435-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՍՈՒՏՆԵՐՈՒՄ ԵՎ ԾԱԽՍԵՐՈՒՄ ՍՊԱՍՎԵԼԻՔ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ**

«Երևան քաղաքի ավագանու 2015 թվականի դեկտեմբերի 23-ի N 435-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման նախագծի ընդունման արդյունքում Երևանի քաղաքի 2016 թվականի բյուջեի եկամուտները և ծախսերը ավելանում են 5,962.9 հազար դրամով:

**ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ**

**Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ**

**ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2015 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 23-Ի N 435-Ն ՈՐՈՇՄԱՆ N 1 ՀԱՎԵԼՎԱԾՈՒՄ  
ԿԱՏԱՐՎՈՂ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

| Տողի NN     | Եկամտատեսակները                                                                           | Հոդվածի NN  | Ընդամենը       | այդ թվում՝ (ավելացումները նշված են դրական նշանով, իսկ նվազեցումները փակագծերում) |                    |
|-------------|-------------------------------------------------------------------------------------------|-------------|----------------|----------------------------------------------------------------------------------|--------------------|
|             |                                                                                           |             |                | վարչական բյուջե                                                                  | ֆոնդային բյուջե    |
| 1           | 2                                                                                         | 3           | 4              | 5                                                                                | 6                  |
| <b>1000</b> | <b>ԸՆԴԱՄԵՆԸ ԵԿԱՍՈՒՏՆԵՐ</b>                                                                |             | <b>5,962.9</b> | <b>5,962.9</b>                                                                   | <b>1,532,446.8</b> |
|             | այդ թվում՝                                                                                |             |                |                                                                                  |                    |
| <b>1200</b> | <b>2. ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԴՐԱՄԱԸՆՈՐՀՆԵՐ</b>                                                        | <b>7300</b> | <b>5,962.9</b> | <b>5,962.9</b>                                                                   | <b>-</b>           |
|             | այդ թվում՝                                                                                |             |                |                                                                                  |                    |
| <b>1260</b> | <b>2.6 Կապիտալ ներքին պաշտոնական դրամաշնորհներ՝ ստացված կառավարման այլ մակարդակներից</b>  | <b>7332</b> | <b>5,962.9</b> | <b>5,962.9</b>                                                                   | <b>-</b>           |
|             | այդ թվում՝                                                                                |             |                |                                                                                  |                    |
| 1261        | ա) Պետական բյուջեից կապիտալ ծախսերի ֆինանսավորման նպատակային հատկացումներ (սուբվենցիաներ) |             | 5,962.9        | 5,962.9                                                                          | -                  |
| <b>1300</b> | <b>3. ԱՅԼ ԵԿԱՍՈՒՏՆԵՐ</b>                                                                  | <b>7400</b> | <b>-</b>       | <b>-</b>                                                                         | <b>1,532,446.8</b> |
|             | այդ թվում՝                                                                                |             |                |                                                                                  |                    |
| <b>1390</b> | <b>3.9 Այլ եկամուտներ</b>                                                                 | <b>7451</b> | <b>-</b>       | <b>-</b>                                                                         | <b>1,532,446.8</b> |
|             | այդ թվում՝                                                                                |             |                |                                                                                  |                    |
| 1392        | Վարչական բյուջեի պահուստային ֆոնդից ֆոնդային բյուջե կատարվող հատկացումներից մուտքեր       |             | -              | -                                                                                | 1,532,446.8        |

**ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2015 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 23-Ի N 435-Ն ՈՐՈՇՄԱՆ N 2 ՀԱՎԵԼՎԱԾՈՒՄ  
ԿԱՏԱՐՎՈՂ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

(հազար դրամներով)

| Տողի N | Բաժին | Խումբ | Դաս | Բյուջետային ծախսերի գործառնական դասակարգման բաժինների, խմբերի և դասերի անվանումները                                                  | Ընդամենը          | այդ թվում՝ (ավելացումները նշված են դրական նշանով, իսկ նվազեցումները փակագծերում) |                    |
|--------|-------|-------|-----|--------------------------------------------------------------------------------------------------------------------------------------|-------------------|----------------------------------------------------------------------------------|--------------------|
|        |       |       |     |                                                                                                                                      |                   | վարչական բյուջե                                                                  | ֆոնդային բյուջե    |
| 1      | 2     | 3     | 4   | 5                                                                                                                                    | 6                 | 7                                                                                | 8                  |
|        |       |       |     | <b>ԸՆԴԱՄԵՆԸ ԾԱԽՍԵՐ</b>                                                                                                               | <b>5,962.9</b>    | <b>5,962.9</b>                                                                   | <b>1,532,446.8</b> |
| 2100   | 01    | 0     | 0   | <b>ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒՅԹԻ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ</b>                                                                                    | <b>(1,957.1)</b>  | <b>(1,957.1)</b>                                                                 | <b>-</b>           |
|        |       |       |     | այդ թվում՝                                                                                                                           |                   |                                                                                  |                    |
| 2110   | 01    | 1     | 0   | <i>Օրենսդիր և գործադիր մարմիններ, պետական կառավարում, ֆինանսական և հարկաբյուջետային հարաբերություններ, արտաքին հարաբերություններ</i> | <b>(1,957.1)</b>  | <b>(1,957.1)</b>                                                                 | <b>-</b>           |
|        |       |       |     | որից՝                                                                                                                                |                   |                                                                                  |                    |
| 2111   | 01    | 1     | 1   | Օրենսդիր և գործադիր մարմիններ, պետական կառավարում                                                                                    | (1,957.1)         | (1,957.1)                                                                        | -                  |
| 2400   | 04    | 0     | 0   | <b>ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ</b>                                                                                                   | <b>(21,437.1)</b> | <b>(1,553,883.9)</b>                                                             | <b>1,532,446.8</b> |
|        |       |       |     | այդ թվում՝                                                                                                                           |                   |                                                                                  |                    |
| 2450   | 04    | 5     | 0   | <i>Տրանսպորտ</i>                                                                                                                     | <b>(27,400.0)</b> | <b>(1,559,846.8)</b>                                                             | <b>1,532,446.8</b> |
|        |       |       |     | որից՝                                                                                                                                |                   |                                                                                  |                    |
| 2451   | 04    | 5     | 1   | ճանապարհային տրանսպորտ                                                                                                               | (27,400.0)        | (1,559,846.8)                                                                    | 1,532,446.8        |
| 2490   | 04    | 9     | 0   | <i>Տնտեսական հարաբերություններ (այլ դասերին չպատկանող)</i>                                                                           | <b>5,962.9</b>    | <b>5,962.9</b>                                                                   | <b>-</b>           |
|        |       |       |     | որից՝                                                                                                                                |                   |                                                                                  |                    |
| 2491   | 04    | 9     | 1   | Տնտեսական հարաբերություններ (այլ դասերին չպատկանող)                                                                                  | 5,962.9           | 5,962.9                                                                          | -                  |
| 2900   | 09    | 0     | 0   | <b>ԿՐԹՈՒԹՅՈՒՆ</b>                                                                                                                    | <b>29,357.1</b>   | <b>29,357.1</b>                                                                  | <b>-</b>           |
|        |       |       |     | այդ թվում՝                                                                                                                           |                   |                                                                                  |                    |
| 2950   | 09    | 5     | 0   | <i>Ըստ մակարդակների չդասակարգվող կրթություն</i>                                                                                      | <b>29,357.1</b>   | <b>29,357.1</b>                                                                  | <b>-</b>           |
|        |       |       |     | որից՝                                                                                                                                |                   |                                                                                  |                    |
| 2951   | 09    | 5     | 1   | Արտադպրոցական դաստիարակություն                                                                                                       | 29,357.1          | 29,357.1                                                                         | -                  |
| 3100   | 11    | 0     | 0   | <b>ՀԻՄՆԱԿԱՆ ԲԱԺԻՆՆԵՐԻՆ ԶԴԱՍՎՈՂ ՊԱՀՈՒՏԱՅԻՆ ՖՈՆԴԵՐ</b>                                                                                 | <b>-</b>          | <b>1,532,446.8</b>                                                               | <b>-</b>           |
|        |       |       |     | այդ թվում՝                                                                                                                           |                   |                                                                                  |                    |
| 3110   | 11    | 1     | 0   | <i>ՀՀ կառավարության և համայնքների պահուստային ֆոնդ</i>                                                                               | <b>-</b>          | <b>1,532,446.8</b>                                                               | <b>-</b>           |
|        |       |       |     | որից՝                                                                                                                                |                   |                                                                                  |                    |
| 3112   | 11    | 1     | 2   | ՀՀ համայնքների պահուստային ֆոնդ                                                                                                      | -                 | 1,532,446.8                                                                      | -                  |

**ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2015 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 23-Ի N 435-Ն ՈՐՈՇՄԱՆ N 3  
ՀԱՎԵԼՎԱԾՈՒՄԿԱՏԱՐՎՈՂ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

(հազար դրամներով)

| Տողի N | Բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման հոդվածների անվանումները                           | NN   | Ընդամենը             | այդ թվում՝ (ավելացումները նշված են դրական նշանով, իսկ նվազեցումները փակագծերում) |                    |
|--------|-------------------------------------------------------------------------------------------------|------|----------------------|----------------------------------------------------------------------------------|--------------------|
|        |                                                                                                 |      |                      | վարչական բյուջե                                                                  | ֆոնդային բյուջե    |
| 1      | 2                                                                                               | 3    | 4                    | 5                                                                                | 6                  |
| 4000   | <b>ԸՆԴԱՄԵՆԸ ԾԱԽՍԵՐ</b>                                                                          |      | <b>5,962.9</b>       | <b>5,962.9</b>                                                                   | <b>1,532,446.8</b> |
|        | այդ թվում՝                                                                                      |      |                      |                                                                                  |                    |
| 4050   | <b>Ա. ԸՆԹԱՑԻՎ ԾԱԽՍԵՐ՝</b>                                                                       | x    | <b>(1,526,483.9)</b> | <b>5,962.9</b>                                                                   | <b>-</b>           |
|        | այդ թվում՝                                                                                      |      |                      |                                                                                  |                    |
| 4200   | <b>1.2 ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ՉԵՌՔ ԲԵՐՈՒՄ</b>                                           | x    | <b>(1,561,803.9)</b> | <b>(1,561,803.9)</b>                                                             | <b>-</b>           |
|        | այդ թվում՝                                                                                      |      |                      |                                                                                  |                    |
| 4250   | <b>ԸՆԹԱՑԻՎ ՆՈՐՈԳՈՒՄԵՎ ՊԱՀՊԱՆՈՒՄ (ծառայություններ և նյութեր)</b>                                 | x    | (1,559,846.8)        | (1,559,846.8)                                                                    | -                  |
|        | որից՝                                                                                           |      |                      |                                                                                  |                    |
| 4251   | -Շենքերի և կառույցների ընթացիկ նորոգում և պահպանում                                             | 4251 | (1,559,846.8)        | (1,559,846.8)                                                                    | -                  |
| 4260   | <b>ՆՅՈՒԹԵՐ</b>                                                                                  | x    | (1,957.1)            | (1,957.1)                                                                        | -                  |
|        | որից՝                                                                                           |      |                      |                                                                                  |                    |
| 4261   | -Գրասենյակային նյութեր և հագուստ                                                                | 4261 | (1,131.9)            | (1,131.9)                                                                        | -                  |
| 4264   | -Տրանսպորտային նյութեր                                                                          | 4264 | (825.2)              | (825.2)                                                                          | -                  |
| 4400   | <b>1.4 ՍՈՒԲՍԻԴԻԱՆԵՐ</b>                                                                         | x    | <b>35,320.0</b>      | <b>35,320.0</b>                                                                  | <b>-</b>           |
|        | այդ թվում՝                                                                                      |      |                      |                                                                                  |                    |
| 4410   | <b>ՍՈՒԲՍԻԴԻԱՆԵՐ ՊԵՏԱԿԱՆ (ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ) ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ</b>                                 | x    | 35,320.0             | 35,320.0                                                                         | -                  |
|        | որից՝                                                                                           |      |                      |                                                                                  |                    |
| 4411   | -Սուբսիդիաներ ոչ-ֆինանսական պետական (համայնքային) կազմակերպություններին                         | 4511 | 29,357.1             | 29,357.1                                                                         | -                  |
| 4412   | - Սուբսիդիաներ ֆինանսական պետական (համայնքային) կազմակերպություններին                           | 4512 | 5,962.9              | 5,962.9                                                                          | -                  |
| 4700   | <b>1.7 ԱՅԼ ԾԱԽՍԵՐ</b>                                                                           | x    | <b>-</b>             | <b>1,532,446.8</b>                                                               | <b>-</b>           |
|        | այդ թվում՝                                                                                      |      |                      |                                                                                  |                    |
| 4770   | <b>ՊԱՀՈՒՄՏԱՅԻՆ ՄԻՋՈՑՆԵՐ</b>                                                                     | x    | <b>-</b>             | <b>1,532,446.8</b>                                                               | <b>-</b>           |
|        | որից՝                                                                                           |      |                      |                                                                                  |                    |
| 4772   | այդ թվում՝ համայնքի բյուջեի վարչական մասի պահուստային ֆոնդից ֆոնդային մաս կատարվող հատկացումներ | x    | -                    | 1,532,446.8                                                                      | -                  |
| 5000   | <b>Բ. ՈՉ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱԿՏԻՎՆԵՐԻ ԳԾՈՎ ԾԱԽՍԵՐ</b>                                                   | x    | <b>1,532,446.8</b>   | <b>-</b>                                                                         | <b>1,532,446.8</b> |
|        | այդ թվում՝                                                                                      |      |                      |                                                                                  |                    |
| 5100   | <b>1.1. ՀԻՄՆԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ</b>                                                                   | x    | <b>1,532,446.8</b>   | <b>-</b>                                                                         | <b>1,532,446.8</b> |
|        | այդ թվում՝                                                                                      |      |                      |                                                                                  |                    |
| 5110   | <b>ՇԵՆՔԵՐ ԵՎ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ</b>                                                                  | x    | 1,532,446.8          | -                                                                                | 1,532,446.8        |
|        | որից՝                                                                                           |      |                      |                                                                                  |                    |
| 5113   | - Շենքերի և շինությունների կապիտալ վերանորոգում                                                 | 5113 | 1,532,446.8          | -                                                                                | 1,532,446.8        |

**ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2015 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 23-Ի N 435-Ն ՈՐՈՇՄԱՆ N 6 ՀԱՎԵԼՎԱԾՈՒՄ ԿԱՏԱՐՎՈՂ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

(հազար դրամներով)

| Տողի N | Բաժին | Խումբ | Դաս | Բյուջետային ծախսերի գործառնական դասակարգման բաժինների, խմբերի և դասերի, ինչպես նաև բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման հոդվածների անվանումները | Հոդված N | Ընդամենը          | այդ թվում՝ (ավելացումները նշված են դրական նշանով, իսկ նվազեցումները փակագծերում) |                    |
|--------|-------|-------|-----|----------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------|----------|-------------------|----------------------------------------------------------------------------------|--------------------|
|        |       |       |     |                                                                                                                                                          |          |                   | վարչական բյուջե                                                                  | ֆոնդային բյուջե    |
| 1      | 2     | 3     | 4   | 5                                                                                                                                                        | 6        | 7                 | 8                                                                                | 9                  |
|        |       |       |     | <b>ԸՆԴԱՄԵՆԸ ԾԱԽՍԵՐ</b>                                                                                                                                   |          | <b>5,962.9</b>    | <b>5,962.9</b>                                                                   | <b>1,532,446.8</b> |
| 2100   | 01    | 0     | 0   | <b>ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒՅԹԻ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ</b>                                                                                                        |          | <b>(1,957.1)</b>  | <b>(1,957.1)</b>                                                                 | <b>-</b>           |
|        |       |       |     | այդ թվում՝                                                                                                                                               |          |                   |                                                                                  |                    |
| 2110   | 01    | 1     | 0   | <i>Օրենսդիր և գործադիր մարմիններ, պետական կառավարում, ֆինանսական և հարկաբյուջետային հարաբերություններ, արտաքին հարաբերություններ</i>                     |          | <b>(1,957.1)</b>  | <b>(1,957.1)</b>                                                                 | <b>-</b>           |
|        |       |       |     | որից՝                                                                                                                                                    |          |                   |                                                                                  |                    |
| 2111   | 01    | 1     | 1   | Օրենսդիր և գործադիր մարմիններ, պետական կառավարում                                                                                                        |          | (1,957.1)         | (1,957.1)                                                                        | -                  |
|        |       |       |     | այդ թվում՝                                                                                                                                               |          |                   |                                                                                  |                    |
|        |       |       |     | <b>1. Կառավարման մարմնի պահպանում</b>                                                                                                                    |          | <b>(1,957.1)</b>  | <b>(1,957.1)</b>                                                                 | <b>-</b>           |
|        |       |       |     | - Գրասենյակային նյութեր և հագուստ                                                                                                                        | 4261     | (1,131.9)         | (1,131.9)                                                                        | -                  |
|        |       |       |     | - Տրանսպորտային նյութեր                                                                                                                                  | 4264     | (825.2)           | (825.2)                                                                          | -                  |
| 2400   | 04    | 0     | 0   | <b>ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ</b>                                                                                                                       |          | <b>(21,437.1)</b> | <b>(1,553,883.9)</b>                                                             | <b>1,532,446.8</b> |
|        |       |       |     | այդ թվում՝                                                                                                                                               |          |                   |                                                                                  |                    |
| 2450   | 04    | 5     | 0   | <i>Տրանսպորտ</i>                                                                                                                                         |          | <b>(27,400.0)</b> | <b>(1,559,846.8)</b>                                                             | <b>1,532,446.8</b> |
|        |       |       |     | որից՝                                                                                                                                                    |          |                   |                                                                                  |                    |
| 2451   | 04    | 5     | 1   | ճանապարհային տրանսպորտ                                                                                                                                   |          | (27,400.0)        | (1,559,846.8)                                                                    | 1,532,446.8        |
